

ՏՄԱՏԵՐՈՐԻ ՏՈՐԻ

# ՄԱՍԿ

Տարեկան դիմը 10 բուրլ կես տարվանը 6 բուրլ:

Սահմանի նամակները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանապատում մէջ:

Օտարապատկանները դիմում են ուղղակի  
Tiflaco. Pedaquia «Muxa»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարումիւն ընդունում է ամեն լիկովով:

Յայտարարումիւնները համար վճարում են  
խրատարները ըստին 2 կոպեկով:

## ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՆՍՈՒԹԻՒՆ, Նամակ Մեծ-Ղարաքլուայից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՆՍՈՒԹԻՒՆ, Ֆրանսիա: Կերամանիա: Գամբետայի ճառը: Նամակ թիւրքայից: — ՀԵՌԱԿԻՆՆԵՐ: — ՅԱԳՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Երբ Երոպայում ստացվեցաւ լուրը թէ Ամերիկայի Միացեալ Նահանգներին նախագահ Գարֆիլդի վրա արձանակ արձակվեցաւ, շատերը մտածեցին որ Գիտո մարդապանը անպատճառ սոցիալիստ պէտք է լինի: Արեմն, ասում էին ամենքը, սոցիալիստները կամենում են համաշխարհային անիշխանութիւն: Իրանց համար մի և նոյն է թագաւոր լինի թէ հանրապետութեան նախագահ, բաւական է որ մարդ իշխանութիւն ունի ձեռքում,— և նրանք վճռել են ամենքին սպանել, ով որ իշխանութեան ներկայացուցիչ է:

Մի քանի ժամանակից յետոյ լուր ստացվեցաւ թէ Գիտո խելագար է: Բայց այդ լուրն էլ շուտով հերքվեցաւ և ահա ըսկվեցան զանազան կոնտրադիկցիաներ այն շարժառիթների մասին, որոնք զրդեցին մարդապանին ձեռք բարձրացնել Ամերիկայի հանրապետութեան նախագահի վրա: Ամերիկայի հանրապետութեան փոխնախագահ պ. Արչեր իրանդացի է և եթէ Գարֆիլդ սպանված լինէր, փոխնախագահը պէտք է բռնէր նրա տեղը և կառավարէր երկիրը մնացած երեք տարի շարունակ: Ինչպէս զեղք ընտրվում է չորս տարով և եթէ այդ ժամանակամիջոցում մեռնի, նրա տեղը առանց նոր ընտրութեան մինչև ընտրողական ժամանակամիջոցի լրանալը փոխնախագահն է բռնում:

Եւ ահա սկսեցան նոր ենթադրութիւններ, երեւի ասում էին, Գիտո իրանդական կուսակցութեան գործիք է և յանձն առաւ նախագահի սպանութիւնը Արչերին նրա տեղը նստացնելու համար, որպէս զի Ամերիկան, այն ժամանակամիջոցում, երբ Անգլիայում վճռվում է իրանդական խնդիրը, իրանդացիներին համակրէր և ոչ թէ Անգլիային, զուգէ ձնուում ներգործելով Մեծ-Բրիտանիայի կառավարութեան վրա իրանդական հարցի յօգուտ իրանդացիների վրձնելու մէջ:

Բայց շուտով յայտնվեցաւ որ այդ ենթադրութիւնները, որքան էլ հաւանական երևային, հիմնովին սխալ էին: Յայտնվեցաւ որ եղեռնագործը պաշտօնանների, բիրտկրատայի կուսակցութեան է պատկանում և իր յանցանքը գործեց զրգով լինելով բոլորովին իր անձնական և իր դասակարգի շահերից:

Յայտնի է որ ամերիկական հանրապետութեան կառավարութիւնը հիմնովում է ընտրողական սկզբունքի վրա, բայց ժողովրդի ընտրված կատարողական իշխանութիւնը իր կողմից իրաւունք ունի նշանակել ազմինստրացիայի վարչութեան պաշտօնաններին: Ահա այդ պաշտօնները ձեռք բերելու մէջ կատարվում են ամեն տեսակ

զեղծումներ և նոյն իսկ պաշտօնանների դասակարգի մէջ զեղծումները, անիրաւութիւնները և կաշառակերութիւնը անպակաս են: Ամեն տեսակ բողոքները, որոնք չաջողվեցան ոչ մի ուրիշ գործի, պարսպանեցին, արհեստի մէջ, ձգտում են այլ և այլ պաշտօնական տեղերին, զանազան ներքի և աններքի միջոցներով որսում են ազատ տեղերը, ինտրիգաներ են անում և զած պաշտօնաններին իրանց տեղերից զերկելու և նրանց տեղը բռնելու:

Գարֆիլդ նախագահը, իր ընտրութեան օրից, յայտնվեցաւ բացարձակ թշնամի բաղդակներով, կաշառակեր պաշտօնանների, շատ դժուարութեամբ և մեծ ընտրութեամբ էր բաժանում վարչական այլ և այլ պաշտօնները: Գիտո եղեռնագործը այդ տեսակ բողոքներին չէր մէկն է: Նա մի ժամանակ եւրոպական քաղաքներից միում ամերիկական հիւպատոսի պաշտօնակատար էր, յետոյ զրկվեցաւ այդ պաշտօնից: Գարֆիլդ զեռ նախագահ չընտրված, նա աշխատում էր պարտաօրեցնել նրան, որ անպատճառ նշանակի իրան ամերիկական հիւպատոս Ֆրանսիայում, Մարսէլ քաղաքում: Բայց Գարֆիլդ, նախագահ ընտրվելուց յետոյ, չը կատարեց նրա խնդիրը, ոչ մի տեղ չը նշանակեց նրան հիւպատոս, ոչ մի ուրիշ պաշտօն էլ չը տուեց նրան: Եւ ահա դերանից ծագեց ովս և վրէժնիչութիւն: Սպանութեան փորձի զրգիչ պատճառը, որին կատարելագոյն անձնական շահ էր:

Ամերիկայի պետական կազմակերպութեան մէջ կայ դարձեալ մի մեծ սխալ, մի մեծ անյարմարութիւն. պաշտօնները, որոնք կատարողական իշխանութեան նշանակութեամբ են տրվում, դարձեալ թւով շատ մեծ են: Շատերը այն կարծիք են յայտնում, որ պէտք է աշխատել, որքան հնար է, սահմանափակել այն պաշտօնները, որոնք վարչութեան նշանակութեամբ են ստացվում և որքան հնար է ընդարձակել այն պաշտօնները, որոնք ձեռք են բերվում ընտրողական հիմունքի վրա: Այդպիսով միայն սանձ կը դրվի ինտրիգաներին, կը թուլացվեն այն դժգոհութիւնները, որոնք Ամերիկայում իրանց սկիզբ են առնում պաշտօնանների դասակարգի, բիրտկրատայի մէջ:

Ինչպէս երևում է դժգոհութիւնը ամեն տեղ նոյն զուելի միջոցներ է գործ դնում և բիրտկրատիան, որ ուրիշ երկրներում ազգերի ամենապահպանողական մասն է կազմում միշտ, որովհետեւ ոյծը նրա ձեռքումն է, Ամերիկայում, որտեղ նա թոյլ և իրաւունքներից զուրկ է, դիմում է նոյն դատարարների, հրէշաւոր միջոցների, սպանութեանը, որին ուրիշ երկրներում դիմում են պետութեան զոյւթեան թշնամիները, անարխիստները: Այդպիսով Ամերիկայում պետութեան կազմակերպութեան, նրա կանօնաւոր խաղաղ զարգացման ամենակատար թշնամիները, անարխիստ սկզբունքի ներկայացուցիչները, — բիրտկրատներն են: Իսկ պահպանողականները այդ երկրում՝ հանրապետականներն են:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՆՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՏՆՂԱՐԱՔԼԻՍԱՅԻՑ

Յուլիսի 18-ին

«Մշակի» № 109 հրատարակած Մեծ-Ղարաքլուայի նամակը, որի մէջ խիստ անտեղի գրգարատեւութիւններ են բարդվում տեղական դպրոցների հոգաբարձուաց և ուսուցչաց վրա, բաւական վատ տպաւորութիւն գործեց թէ վերջիններս և թէ ժողովրդի վրա: Նամակագիրը ձեռնդրելով իրան հասարակութեան բարեկամ և ծածկելով թանձր քօղի տակ իր սրտում ամբարված կիրքը և սև նախանձը, այնքան խորամանկութեամբ է խօսում, որ նրա բնաւորութեանը և հանգամանքին անձանօթ մարդը անուշտ կը հաւատայ և արած թշնամութիւնը բարեկամութիւն կը համարէ. և այսպէս, նա սկսելով երկպառակութեան և ատելութեան սերմ ձգել ժողովրդի, ուսուցիչների և հոգաբարձուների մէջ, սառնացնելով գործող անձանց պարտաւորութիւններ կատարելու մէջ, ժպտում է ինքը, և ինչպէս երևում է շարունակելու է իր գրգարատեւութիւնները զիջել, զեռ երկար ժամանակ, մինչև կը յազեցնի իր ոչ մի օրինաւոր փաստի վրա չը հիմնած կիրքը, որով առաջին քայլն անելով երկպառակութեան և վրէժնիչութեան մէջ, չինչու պարտակով խանդարելու է շատ բան ի վնաս հասարակական օգտի, որ պատիւ չէ անում ոչ իրան թղթակցին և ոչ լրագրութեան, որ անբողոքութեան է ունեցել այդ տեսակ մով և բողոքներով թղթակցներին պատահելու, որոնք թշնամութիւնից գործին հայտն են վատ կողմից, խոչընդոտելով: Թէ որքան վնաս է մեր դպրոցներին, — եթէ այդ պարտութիւնները նամակները, հակառակ նրանց համար գործող անձանց, որոնք նայելով չրջապատող հանգամանքներին բաւականին բարեխղճութեամբ են վարում պարտաւորութիւնները, — այդ արդէն պարզ է. անխղճութիւն է խաղաղք չինել հասարակական օգուտները մի բողոքները դիւ մարդու և գերի չինել նրան մի ամբողջ հասարակութիւն իր գործիչներով որ կրքից կուրացած խռովութիւն է ցանկում այս և այն լրագրում զանազան անունների տակ ծածկված: Արհամարհանքով նայելով թոյլ տալ որ ինչ կողմից գրեն, դժուար է տանել և ընթերցող հասարակութիւնը կը դատապարտէ. պատասխանել ամեն մի ցանցառ դրգարատեւանց, պէտք է բան ու գործ թողած գրանով պարագլել Յետոյ:

Թղթակցից չէ հասկանում թէ ում, երբ և ընչու համար է մտրակում, նա պէտք է կշռէր, թէ մտրակելով օգուտ է տալիս թէ վնաս, գործել է տալիս թէ վնասեցնում է,— նա այնքան անազնիւ է գտնվում, որ թոյլ է տալիս իրան անպատեւել հոգաբարձուաց և ուսուցչաց, անխիղճ, խաբուսայ, ազգի դառն քրտինքով վատտակած փողերով լարիող, միամիտներին խաղախ ճանաչողներով խաղողը բառերը շուշլել, աւելացնելով՝ «Մի օր գործը քանակացած կը հրատարակվի»: Այ ընդ սուտ և անհիմն փաստերի վրա հիմնած մարդարեւութիւն: Ո՞վ որ փոքր ի շատէ ծանօթ է մեր հոգաբարձուների և ուսուցիչների հետ և վերջիններս ստացած ուժղի քանակութեան հետ, կարողաւ այդ խօսքերը, գրողին խելքից զրկված կը համարէ. նա հազար (իրը) իրան յայտնի փուշ օրինակներից, ընտրում է երկու դասարկը, որի դէմ, ձեզ, պ. խմբագիր, նեղութիւն եմ տալիս յայտնելով. թէ մեր դպրոցը սկսվելով 1853 թականում, մինչև 1862 թ. ոչ մի կողմից զրամաղուխ չէ ունեցել, որը կառավարելով մի ուսուցիչ, ստացել է տարեկան 120 բուրլու չափ, որի մի մասը տուել են աշակերտատեղերը, իսկ միւսը լրացրել են դպրոցի բարեբար Գ. և Մ. Խան-Աղեանները, իրանց սեփականութիւնից: 1862 թ. հանդուգեալ Մատթէոս Կաթողիկոսի բարեհաճութեամբ յատկացրած է դպրոցին եկեղեցական գումարից 2300 բ. զրամաղուխ, որից

ստացած 300 բ. տարեկան սոկոսով, մինչև 1877 թ. վերառնուութեամբ Մ. Խան-Աղեանցի, ոչ միայն պահուել է 2 ուսուցիչ, այլ և 500 բ. աւելացնելով գնված է դպրոցի համար մի տեղ, ընդարձակ յարմարաւոր սենեակների պատերով, որ արժէ մինչև 3000 բ. և այդքան ժամանակամիջոցում վերառնուելը հասարակութիւնից ընտրուած հաշուապահաց հետ ամեն տարի հաշիւ է ներկայացրել հոգևոր իշխանութեանը: 1877 թ. ակախից դպրոցի վարչութիւնը յանձնված է ներկայ հոգաբարձութեանը որ նոյնպէս մանրամասն հաշիւ է ներկայացրել ում հարկն է ամեն տարի, և այս վերջինը ոչ երկար ժամանակամիջոցում, թղթակցից ծաղրած և մեղադրված հոգաբարձութիւնը, նուիրատուութեան ձեռքով չինչ է բաւականին ընդարձակ դպրոցական տուն, բացել է օրիորդական դպրոց, առանձին աղբիւր գտնելով կառավարելու համար, և դպրոցական զրամաղուխը՝ պ. Ա. Թահիրեանցի 4000 բ. զըրամներով, հասցրել է մինչև այսօր 8650 բ.: Եւ այս բոլոր հաշիւը այնքան պարզ է, որ ցանկացողը և ձեր թղթակցիցը կարող է մի քանորդ ժամում ստուգել երբ կամենայ, հոգաբարձութեան մօտ գտնված պատճենական սոււմարից:

Հոգաբարձուներին մեղադրել, թէ ինչի չեն հրամարվում իրանց պաշտօնից, անարդարութիւն է. դա հասարակութեան գործն է, նրանք ուրախութեամբ կը հրաժարվեն եթէ հասարակութիւնը կամենար: Այս մասին մօտ օրերումս ըստուգեց և թեմական տեսուչ պ. Պետրեանցը:

Գլուզցի

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 5 օգոստոսի

Տեղոյս հայ և ռուս լրագրներում մեր Թիֆլիսի հիւսնների (СОЛНЦЕ) վրա ոչ ոք ոչինչ չէ խօսել, բայց ես աւելորդ չեմ համարի, այսուհետև իմ կարողութեան չափ խօսում այդ դասակարգի պետքերի մասին, և յուսով եմ որ դուք էլ, յարգոյ խմբագիր, չէք ինայի ձեր պատուական թերթի էջերում, երբեմն տեղ տալ յօդուածներին:

Այժմ խօսեմք առաջին նիստի վրա, որ յուլիսի 31-ին նախագահութեամբ ստարչինայի կայացաւ Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում:

Հրամանաւ նախագահ և ստարչինա Նաումնկոյի Թիֆլիցի ամենայն հիւսնները պէտք է ներկայ լինին այդ նիստին, բայց ցաւօք սրտի կը յայտնեմք, որ այս անգամ հազիւ 1/3 մասը ներկայ գտնվեցաւ. յուսով ենք որ միւս անգամ բոլորեքեան ներկայ կը գտնվեն և կը պահպանեն իրանց իրաւունքները:

Նիստը կայացաւ 7 ժամին երեկոյեան և հրամանաւ նախագահի ռուս լրագրով կարդացվեցաւ նիստի նպատակը հետեւեալ բովանդակութեամբ: «Պարոնայք. կարծեմ ձեզանից ամեն միւր տուել է իր տարեկան նշանակեալ երկու բուրլ (ստուլի փող) իմ նախորդներին, բայց ցաւօք սրտի կը յայտնեմ որ այդ գումարը մեզ ոչ մի օգուտ չէ բերել, և թէ ուր է գնացել. — չը գիտենք»:

«Այ չեմ ցանկանում նոյնը անել, ինչ որ արել են մինչև այսօր ուրիշները, թէև այսօր ես ձեր ստարչինա եմ, ձեր մեծն եմ, բայց ձեզանից ամենայն մի անհատ երբ և ինչ ժամանակ կամենայ կարող է գալ մեր վարչութեանը և ինչ ձանից հաշիւ պահանջել, որին և ես մեծաւ ուրախութեամբ կընդունեմ: «Իմ կարգադրութիւնները հետեւեալները են: 1) Այն անձը որ ինքն տէր է և իր համար սեփական քարխանայ ունի, տարեկան պէտք է տայ մեր կասային երկու բուրլ: 2) Այն անձը, որ ուրիշ իշխանութեան ներքոյ է (պօզմաստիքի), նա տարեկան պէտք է տայ մի բուրլ: 3) Երբեմն մեր համբարը ի վարձատրութիւն